




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported CC BY NC SA License.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ժամկետային ձևաչափով կամ կայքով
ձևաչափով կամ ոչ ձևաչափով առանց նյութի ստեղծելու իրաւարժանի

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format
Adapt – remix, transform, and build upon the material

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ


ՆՈՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ
ԶՎԱՐԹՆՈՑԻ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՏՊԱԾ Զ. Խ. Ս. Զ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԵՂԵԿԱԳՐԻ № 1-ԻՑ

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

ՆՈՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ
ԶՎԱՐԹՆՈՑԻ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՏՊԱԾ Զ. Խ. Ս. Զ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԵՂԵԿԱԳՐԻ № 1-ԻՑ



ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ.

ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29

ԳՐԱՌԵՊ. 699Բ.

ՏԻՐԱԺ 50

ՆՈՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԶՎԱՐԹՆՈՑԻ ՄԱՍԻՆ

Հայ հարտարապետութեան պատմութեան մեջ յիշի 7-րդ դարը իրավամբ համարվում է փայլուն շրջաններից մեկը, ապա այդ շրջանում իր հատուկ և առանձնակի տեղն է գրավում Ներսէս Տայեցու կառուցած հոյակապ Զվարթնոցը, վորի ավերակներն ահա քառորդ դար է յերևան են յեկել և իրենց վրա դարձրել հայ և ոտար մասնագետ գիտնականների ուշադրութեանը:

Առաջ քան մեր բուն նյութին անցնելը ավելորդ չե՞ր լինի հիշեցնելու այստեղ թէ ինչ հանդամանքներ պատճառ դարձան Զվարթնոց յեկեղեցու ավերակների յերևան գալուն, ինչպէս և նրանց մեծ համբավին:

Վաղարշապատից (մոտ 4 քիլոմետր հեռավորութեամբ) դեպի Յերևան տանող խճուղուց աջ, մի բլուրի վրա, հայտնի էյին դուրս ցցված մի քանի խոշոր քարեր: Այդ տեղին, կամ քարերին մոտակա բնակիչները, սերունդից սերունդ կոչում էյին Ս ա ն դ ա ր վ ա ծ յ ե կ ե դ ե ց ի կամ Հ ա ն դ ա ծ յ ե կ ե դ ե ց ի:

Եջմիածնի Ճեմարանի բաղում վաղուց ի վեր գտնվում էյին 4 մեծ խոյակներ, հյուսվածո որնամենտներով և յոնիական, յեղջյուրաձև քանդակներով: Այդ խոյակների վրա յերևում էյին մեկի վրա՝ N-C, մյուսների վրա՝ N-K հունարեն գլխատառեր:

Ռուս աղագեմիկոս Կոնդակովն անցյալ դարի ութսունական թվականներին տեսնելով այդ խոյակները, կարծել է վոր նրանք մնացորդ են Եջմիածնի տաճարի նախկին շէնքից:

Վիեննայի համալսարանի դասախոս, գեղարվեստի պատմութեան քաջ — ծանոթ, պրոֆեսոր Սարչիզովսկին, 1888—90 թվերին Հայաստան արած հանապարհորդութեան ժամանակ, Եջմիածնում տեսնում է այդ խոյակները, ուշադրութիւն դարձնում նրանց վրա, և այն կարծիքն է հայտնում վոր՝

ա) խոյակները իրանց կազմութեամբ և բնույթով հիշեցնում են Հուստինիանոսի ժամանակի Բյուզանդական խոյակները, ուրեմն չեն կարող ավելի հին լինել:

բ) N-C և N-K նշանակում են՝ Ն ե ր ս ե ս կ ա թ ու դ ի կ ո ս. ուրեմն շէնքը վերաբերում է Ներսէսներից մեկին:

Հայոց կաթողիկոսներից Ներսէս Ա. (Մեծ) 4-րդ դարում եր ապրում է չե՞ր կարող կառուցողը լինել այդ յեկեղեցու: Ներսէս Բ. (524—533) պաշ-

տոնավարել և Հուստինիանոսի դահակալության տոաջին տարիներում, յերբ զեռ նման զամբյուղաձև խոյակներ գոյություն չունեին, զոնե չեն գործածված Ս. Սոֆիայի և ժամանակի այլ յեկեղեցիների շէնքերում. մնում էր Ներսես Գ. Տալեցին, վորի վոչ միայն ժամանակը հարմար է, այլ վոր նա հայոց պատմության մեջ էլ շինողի, կառուցողի անուն ունի:

Ստրչիգովսկին գլխի յե ընկնում թե՛ չը լինի՝ վոր այս քարերը պատկանում են նույն այդ Ներսեսի հիմնած և հայ պատմիչների կողմից հիշված յա ն ու ն երկն ա վ ո Ր զ վ ա Ր Թ ն ո ց ն յեկեղեցուն:

Այս կարծիքը միանգամայն հաստատվում է, յերբ նրա հարցին՝ թե վո՞րտեղից են այս խոյակները, ճեմարանի ուսուցիչներից մեկը (Նիկ. Քարամյան) պատասխանում է. —

«Յես ճեմարանի աշակերտ էյի, 1875 թվին, յերբ այս խոյակներից յերկուսը, վոր յերկար ժամանակ վանքի հարավային դավթի մեջ էյին, բերվեցին ճեմարանի պարտեզը: Նույն տարին մյուս յերկուսն էլ այստեղ բերին վոչ թե վանքի մոտերից, այլ Եջմիածնից 4 վերստ հեռու Յերևան տանող ճամբու աջ կողմը յերևող Հա ն դ ա ծ յ ե կ ե դ ե ց ի կոչված տեղից»^{*)}

Զվարթնոց յեկեղեցու տեղը գտնված էր. Խ ա ն դ ա Ր Վ ա ծ կ ա մ Հ ա ն դ ա ծ յեկեղեցին էր նա, վոր պետք էր բլուրի տակից լույս աշխարհ հանել:

1893-ին Մեսրոպ վ. Տեր-Մովսիսյան վորձ է անում պեղումներ կատարելու Զվարթնոցում, բայց կառավարական պետք յեղած արտոնությունը չունենալով, թողնում է այդ միտքը:

Ներսես Տալեցու հրաշակերտի լույս աշխարհ հանելու բախտը վիճակված էր Եջմիածնի մի ուրիշ միաբանի, Խաչիկ վարդապետ Դատյանին, վոր 1900 թվին ստանում է պեղումներ անելու արտոնությունը և անմիջապես գործի անցնում:

Ճիշտ այդ ժամանակներում արտասահմանից կովկաս և գալիս ճարտարապետ Թորոս Թորամանյան, վոր ուսումնասիրելով ու հավագրելով, դադրելով ու նկարելով Խաչիկ վարդապետի մշակների բան ու բրիչի տակից լույս ընկած ամեն մի քար ու բեկոր, կազմում է Զվարթնոցի հատակագիծն ու շէնքի՝ իր «յենթադրեալ» ամբողջական վերակառուցվածքը, բեկոնատրուկ-ցիան, առաջին անգամ մի մասնագիտական հոգված տպագրելով «Մուրճ» ամսագրի 1905 թ. 5-րդ համարում:

Ս տ Ր չ ի դ ո վ ս կ ի, Խ ա չ ի կ վ ա Ր դ ա պ ե տ և Թ ո Ր ա մ ա ն յ ա ն, ահա ուրեմն ժամանակագրական կարգով այն յերեք անձնավորությունները, վորոնք գլխավոր դերերը խաղացին մեր կլասիկ ճարտարապետության այդ հոյակապ հիշատակարանի յերևան գալուն, և իր նախնական հավանական կերպարանքով գիտական աշխարհի առաջ ցուցադրվելու գործում:

Պեղումները, վորք ընդհատումներով, տևում են 20 տարուց ավելի և լիովին արդարացնում այն հույսերը, վոր կար գործի սկզբում: Ավերակների հրակատարածությունը, գլխավոր շէնքերի գիտականորեն-գեղարվեստորեն վերականգնած կերպարանքը գալիս են ապացուցելու պատմիչների մեզ թողած հիացական վկայությունները. —

^{*)} Մ. Արեղյանի տեղով վերջին յերկու խոյակները բերվել են վոչ թե «նույն տարին», այլ հետևյալ 1876-ին, յերբ ընթր աշակերտ և յեղել և տեսել և:

— «Շինեաց (նեքսէս) անդ և եկեղեցի մի յանուն Երկնաւոր Զուարթնոցն... և շինեաց եկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեալք, արժանի աստուածային պատուոյն սրում նուիրեացն» — ասում և ժամանակակից ահանաւորս պատմիչը՝ Սերեռս. (41. 14.):

— «Դնե ապա հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տանն Աստուծոյ բոս անվանակրթեան սրբոյն Գրիգորի...» — գրում և Դրասխանակերպցին. (Հովհան. կաթ. Թիֆլ. 83.):

— «Շինեաց և զսուրբն Գրիգոր զզարմացուցիչն տեսողաց» — գրում և Գանձակեցին. (Թիֆլ. 58.) և այլն:

Մեր նպատակը չէ այսօր քննութեան առնել Զվարթնոցի մասին մինչև այժմ յեղած կարծիքները մասնադիտական հարցերում, այլ առաջ բերել այդ ուղղութեամբ մեր մասնակի պրպտումների և ուսումնասիրութեանների ընթացքում ծագած մի-յերկու նոր կարծիքներ:

Ա. ԶՎԱՐԹՆՈՅԸ ՍՈՍԿ ՅԵԿԵՂԵՑԻ ԶԵՐ

Զվարթնոցը իր սկզբնական շրջանում յ ե կ ե ղ ե ց ի չեր, կամ ս ո ս կ յ ե կ ե ղ ե ց ի չեր, այլ մ կ ր տ ա ր ա ն կամ տ ա ճ ա ր մ կ ր տ ու թ յ ա ն, ճիշտ համանմանը և համատիպը Արևմուտքում գոյութեւն ունեցող բապտիստ երիտւմնների կամ կ ա պ ա կ ե լ լ ա բ ա պ տ ի ս տ եր ի ա ների:

1. ԲԱԳՏԻՍՏԵՐԻՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ. Քրիստոնեայութեան առաջին դարում հայտնի յի, վոր նոր կրօնը ընդունողներին մ կ ր տ ու թ մ եյին բացողյա, գետերում, լճակներում, աղբյուրներում, ուր վոր պատահում եյին ջրի. այդ մասին վկայութեւններ կան «Գործք առաքելոցի» մեջ. (տես Ը. 36—38. ԺԶ. 14—15):

Յերբ քրիստոնեայաների դեմ հալածանքներ սկսվեցին և նոր կրօնին հետևողներն ստիպված եյին ստորերկրյա կատակոմբներում տալի, այնտեղ մկրտութեւնները կատարում եյին հատուկ շինված ավազանների մեջ:

Քրիստոնեայութեան հաղթանակից, այսինքն՝ պաշտօնական կրօն ճանաչվելուց հետո, յերբ մկրտվելու եյին հալաքովում մեծ խմբեր ու բազմութեւններ, պետք յեղավ շինելու հատուկ մկրտարաններ, բաղտեւտերիումներ: Այդ մկրտարանների շէնքերն ունեյին կլոր կամ ութնանկյունի ձև, կամարածածկ եյին՝ մեջ տեղում ունենալով մարմարյա կամ այլ մաքուր-քարաշէն մեծ ավազան:


Այդպիսի մկրտարաններ կառուցվել են վոչ միայն վաղ-քրիստոնեայութեան շրջանում, այլ և մինչև Ժ—ԺԲ դարերում:



ՊՈՄՊԵՅ. Մկրտատան. ներքին տեսք. (նկ. 1)

Նշանավոր բապտիստերիաներից հայտնի յեն —

Հռոմում, Լատերանի Ս. Հովհաննես (Baptisterio di San Giovanni Laterano, (տ. նկ. 2) և Ս. Կոստանտինի, 4-րդ դ., (նկ. 3) Ռեմիսիումում, 6-րդ դ., Պիզայում (նկ. 4) և Ֆլորենցիայում, 12-րդ դար:



Հռոմ. Լատերանի Ս. Հովհաննես
մկրտարանի ներքը. (նկ. 2)

Ֆրանսիայում ավելի ուշ կառուցված բապտիստերիաներ հայտնի յեն՝ Saint Jean de Poitiers և Saint Front de Perigueux. Կլորաձև, Զվարթնոցի տիպի շենքերից և նաև Հռոմում Հաղրիանոս կայսեր մավզովեն, 2-րդ դարում. (նկ. 5):

2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՐԻՔ ԿԱՐՄԿՐՏԱՐԱՆԻ. — Հեթանոսական կրոնի գոյությունը Հայաստանում, քրիստոնեյության պաշտոնական պետական կրոն հայտարարվելուց (4-րդ դարի սկզբին) շատ հետո յիլ շարունակվելու զորեղ ապացույցներ կան. բազմաթիվ մարդիկ դեռևս չհաշտվելով նոր կրոնի հետ, ամուր կապված էին իրենց պապենական հեթանոս սովորություններին, կամ հարել էին նոր տեսակի աղանդներին: Բազմաթիվ հասակավոր մարդիկ մկրտված չէին և չէին համարվում «մաքուր» քրիստոնյա:

Հիշենք ժամանակագրական կարգով մեր պատմիչների աված հետևյալ վկայությունները. —

ա) Վոր 4-րդ դարում Ներսես Մեծի մահից հետո հեթանոս սովորությունները Հայաստանում նորից կենդանացան:


բ) Վոր 5-րդ դարում Մեսրոպ Մաշթոցի պես սուրբ մարդը բռնի ույժով պատժելու պնաց Գողթանի հեթանոսներին: (Խորեն. Գ. խէ):

գ) Վոր Վարդանանց պատերազմի ժամանակ (451) հայոց բանակի մեջ դեռևս չմկրտված մարդիկ կային, վորոնց պետք է յեղել ճակատամարտից առաջ մկրտել. (Յեղիշե, Ե. յեղան.):

դ) Վոր նույն 5-րդ դարում Դավիթում դեռևս մեհյան կար, վորը քանդելով, նրա տեղում շինում են Ս. Գրիգոր յեկեղեցին. (Թովմա Արծր, Բ. ա.):


ե) Վոր վերջապես Ներսես Գ. 7-րդ դարում իր յեկեղեցական «Սահմանք և կանոնք»-ի 12 և 13 հոդվածներով արգելում է վոչ միայն «հեթանոս կին առնել», այլ և հեթանոսի հետ «ուտել և ըմպել». (Կանոնադիրք, 118):

Բայց հին աստվածները չեն մոռացվել և հետագա դարերում. հիշվում են հեթանոսության հետքեր 12-րդ դարում. հեթանոս-կռապաշտ հայ մարդ և ապրել նույնիսկ 17-րդ դարում. (Զաքարիա Սարկ, Բ. է):




(Նկ. 3) ՀՌՈՄ. Ս. Կոստանդնուպոլսի հատակագիծը և ներքին տեսքը

3. ԶՎԱՐԹՆՈՑԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆԹԱՅԸ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ. Խոսքով Ապրուեղ Բյուզանդիայի զեմ իր տարած փառավոր հաղթություններից և համայն քրիստոնյաների սրբազան քաղաքը՝ Յերուսաղեմը գրավելուց (614) հետո, իր քաղաքական դիրքն հանդեպ Արևմուտքի ավելի ևս ամրացնելու նպատակով՝ Տիգրանում 615-ին գումարում և քրիստոնյաների մի ժողով, փոքին մասնակցելու հրավիրվում են «յամենայն հալիսկոպոսունք կողմացն Արևելից և Ասորեստանի»։ Այդ



ԳԻՋԱ. Մկրտաբանը, արտաքին տեսք.
(Նկ. 4)



ՀՌՈՄ. Հաղբխանի դամբարանը,
(Նկ. 5)

ժողովում պետք է պարզվեյին դավանաբանական խնդիրները՝ նրանց բերելու մի հայտարարի:

«Լսեմ թե երկու կողմանք են քրիստոնեյիցն և մինն զմիւսն նշովե, զինչ համարին իրավացի. արդ, միարանութեամբ ժողովեացին ի դուռն արքունի, զի զուղիղն հաստատեցեն և զթիւրն մերժեցեն» (Սեր. ԼԳ):

Խոսքովի կողմից ժողովի վոստիկան կամ թագավորի ներկայացուցիչ են նշանակվում Սմբատ Բագրատունի և Գարրիկ Շիրիկարացի բժշկապետը, վորոնք և վայելում էին Շիրին թագուհու հովանավորությունը: Հայոց կողմից պատվիրակներ ներկա յին լինում Կոմիտաս Մամիկոնեյից և Մատթեոս Ամատունյաց յեպիսկոպոսները:

Մենք հավական ենք համարում նույնիսկ վոր այդ ժողովը գումարվել է հենց Սմբատի և այդ յեպիսկոպոսների (Շիրին թագուհու միջնորդությամբ) ձեռնբեցությամբ, վորովհետև Սերեոսն ասում է վոր Կոմիտասն ու Մատթեոսն արդեն այնտեղ էին. «Դիպեցան անդ»:

Ժողովն իր վորոշումը հանում է ի նպաստ Հայոց յեկեղեցու դավանության. յեթե հավատանք պատմիչին, նույնիսկ Նեստորականներու հայրապետին ասյանից դուրս են հանում և ծիծում. (Սեր.):

Ի հարկե Խոսքովին հետաքրքրողն այն չեթե քրիստոնյա յեկեղեցիներից վորի դավանությունն է ճշմարիտը աստվածաբանական տեսակետից, այլ այդ դավանությունների հետ նա կապում եր քաղաքական որիննտացիայի խնդիրներ. Նեստորականները և քաղկեդոնիկ հայերը իրենց որիննտացիայով նալում էին դեպի Արևմուտք. այդ արդեն բավական եր, վոր նրանք թշնամի նկատվեյին պարսից քաղաքականության: Վաղուց չեթ մանավանդ, վոր Վրաստանը Հայոց հետ կտրել եր իր յեկեղեցական կապը, անցնելով քաղկեդոնիկ դավանության:

Զուգադիպությամբ այդ միջոցներին Հայաստանում վախճանվում է կաթողիկոս Արրահամ Աղբաթանեցին. և Պարսից ժողովին մասնակցող Կոմիտաս յեպիսկոպոսը Տիգրոնից Հայաստան է վերադառնում վորպես կաթողիկոս: Իր մի թղթի մեջ նա գրում է. «աջողեցա ի կաթողիկոսութեան Հայոց Մեծաց» (Գիրք Թղթոց 218):

Պարս-Բյուզանդական պատերազմները վոչ միայն չեն դադարում Կոմիտասի կաթողիկոսության տարիներում, (615—628), այլ գնալով ավելի սաստկանում են:

Յերբ Խոսքովը շարունակում է Հերակլի դեմ յուր հոխորտանքը և իր նամակների մեջ նրան անվանում է «անմիտ և անպիտան ծառայ», Բյուզանդիայի կայսրը լցվում է վրեժխնդիր կատաղությամբ դեպի Արևելքի այդ բարբարոսը, սրբազան պատերազմ է հայտարարում Պարսկաստանին, բանակի գլխավոր հրամանատարությունն ստանձնելով ինքը:

Վեց-յոթ տարի (622—628) տևող համառ և փոփոխական կռիվներից հետո նա վոչ միայն յետ է գրավում Բյուզանդական հողերը, այլ և հրի ու սրի մատնելով Սասանյանների մայրաքաղաքը, փախուստի յի մատնում Խոսքովին ու ինքը հաղթական մեծ շուքով վերադառնում Պոլիս: Հայերը ճարպիկորեն վաղուց արդեն իրենց գնդերով անցել էին Հերակլի կողմը և կռվում էին պարսից դեմ:

Անցնում են մի քանի խաղաղ տարիներ: Կոմիտաս կաթողիկոսը վախճանած էր արդեն. վոմե Քրիստափորի կարճատև կաթողիկոսությունից հետո հայրապետական աթոռը զբաղել էր Յեզր Փառամնակերացին: Բյուզանդիայի արքունիքը յերկրի արևելյան սահմաններում քաղաքական կայունությունը պահելու նպատակով զարձյալ մեջտեղ է քաշում յեկեղեցիների միացման խնդիրը. Հերակլ կայսրը զալիս է Հայաստան և, կարինում կանգ առնելով, հունական Հայաստանի սպարապետ Մովսես Գնունուն ուղարկում է Դվին, Հայոց կաթողիկոսին հրավիրելու իր մոտ: Յեզրը գնում է Կարին, յերեք որվա բանակցություններից հետո համաձայնություն է գալիս յեկեղեցիների մերձեցման խնդիրներում: Կայսրը իր մեծամեծների, և կաթողիկոսն իր մարդկանց հետ, բոլորը միասին, հաղորդվում են. Յեզրը ստորագրում է Հերակլի ներկայացրած Հ ա վ ա տ ո ղ ի ը ր և «մեծաւ շքով» դառնում Դվին:

Հայոց պատմիչները միաբերան դատապարտում են Յեզրի այդ «դավաճանական» քայլը և այս կաթողիկոսի անունը, ինչպես հայտնի յե, մինչև վերջերս էլ զբքերի մեջ գրվում էր գլխիվայր:

Քաղաքական հանգամանքները կրկին դժնդակ կերպարանք են ստանում. Սասանյան Պարսկաստանի տեղ այժմ հարավից գալիս էր մի նոր փորձանք՝ Արաբների արշավանքը ու սպառնում Նոր Հոռմին և նրա գերիշխանություն տակ գտնվող յերկրներին:

Բյուզանդական դիվանագիտությունը անհրաժեշտ է գտնում, վոր Յեզրին հաջորդողը լինի ևլ ավելի վստահելի անձնավորություն, իր հոգով ու դաստիարակությամբ հունասեր մեկը և այդ մ է կ ը Տայոց Ներսես յեպիսկոպոսն էր: Իր տղայական հասակից Բյուզանդիայում սնված և ուսած, նախկին գինվորական, (ըստ Որմանյանի նաև իշխան,) կրոնական հայացքներով լիովին կողմնակից հունական յեկեղեցուն: Սերեսոս թեև նրան վորակում է վորպես «այր առաքինի վարուք», բայց չի ծածկում նրա խորամանկ գաղտնապահությունը կաթողիկոսության հասնելու համար:

«Եւ սնեալ ի մանկութենե յաշխարհին հունաց և ուսեալ զլեզուս և ըղղպրութիւն Հոռմին, և շրջեալ ընդ աշխարհս զաւրու կարգաւք զինուորութեան և հաստատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի, և ի վերայ տումարին Լեոնի: Եւ վոչ ումեք ի վեր հաներ զխորհուրդս անբարշտությանն մինչև եհաս յեպիսկոպոսութիւն յաշխարհին և անտի կոչեցաւ յաթոռ կաթողիկոսութեան... ի սրտի իւրում ծածկեալ ուներ զթիւնս դառնութեան, և խորհեր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն» (Ս է Բ. 228):

Ներսես Տայեցու կաթողիկոսության առաջին տարին 641 թվականն է, Դվինի կոտորածի տարին՝ վոր և Հերակլի մահվան տարին է:

Հայաստանի սլարսկական մասը իր Դվին մայրաքաղաքով այժմ յենթարկված էր Արաբների առաջխաղացության վտանգին և Հայոց սպարապետը՝ Թեոդորոս Ռշտունին քաղաքական հեռատեսություն ունեցալ բարեկամանալ Արաբների հետ. մինչդեռ կաթողիկոսը Ներսես Գ., ինչպես տեսանք, ամբողջությամբ հակված էր Արևմուտքին: Հերակլի տեղ Բյուզանդիայի կայսերական գահը զբաղող յերիտասարդ Կոստանդը շարունակում էր իր պապի քաղաքականությունը յեկեղեցիների միացման խնդրում:

Անձամբ լավ ճանաչելով ներսեսին՝ նա արքունի գանձարանից միջոցներ և հատկացնում «ի վերայ պոպոտային Վաղարշապատ քաղաքի» մի փառավոր յեկեղեցի կառուցելու համար, հարված հասցնելով Եջմիածինի նշանակությանը*):

«Ի՞նչ միտք ունի, ի՞նչ կարևորություն կար արդյոք—զրոււմ և Արիտակես յիպ. Սեդրակյանը—Հայոց Մայր կաթողիկէ տաճարի դիմաց աշտարակի մի վայելչակերտ, մեծածախս յեկեղեցի և կաթողիկոսարան»?) շինելուն. ի՞նչ շահ էր գտնում դորանում Բյուզանդիոնի կայսերական կառավարութեանը, վոր բոլոր ծախսերը հոգում էր ի հաշիվ յուր գանձարանի և նավակառայաց հանդեսին հարկ էր համարում շուք տալ կայսերի ներկայութեամբ» (Պատկերահարգութ., 181):

Ահա ուրեմն այս ամենից պարզվում և թե քաղաքական ինչ հանգամանքներ են պատճառ դարձել Զվարթնոցի հիմնելուն:

4. ԶՎԱՐԹՆՈՑԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ. Ներսես Գ. Տայեցին Զվարթնոցի շինությունն սկսում է 645 թվին. յեկեղեցու հետ պետք էր կապել այնպիսի անուններ և դեպքեր, վոր համազոր լինեյին Եջմիածնին «և ահա հայանվում է թե նոր յեկեղեցու տեղն այն տեղն է, ուր Ս. Գրիգորի Խորվիրապետից գալիս Տրդատն ընդառաջել և նրան յուր խոզակերպ տեսքով. թե Լուսավորիչը մի գիշեր այնտեղ մնալով՝ տեսիլքի մեջ տեսնում է յերկնային հրեշտակների գործը: Այդ իսկ հանգամանքներով նոր յեկեղեցին կոչում են Ս. Գրիգոր կամ Յանուս յեկնային Զվարթնոցն: Այդ գեոքափական չե. տեղն ավելի սրբացնելու համար, հետագա պատմիչները, գրույցներից առնելով, գրում են, վոր յեկեղեցու չորս մեծ սյուների տակ ամփոփվել են Լուսավորչի մասունքները և մի քարե զգրոցի մեջ նրա գլուխը. մինչդեռ ժամանակակից ականատես պատմիչը՝ Սերեոս տյո մասին վոչ մի խոսք չունի ասած:

Զվարթնոցի կառուցումը առաջ և գնում արագ թափով. պատերը բարձրանում են. բայց վոչ վոք այդպիսի յեկեղեցի չէր տեսել Այդ ժամանակ կային Յերերույքը, Գայիանեն, Հոփուսիմեն, Մրենը և այլ յեկեղեցիներ: Նոր յեկեղեցին ինչ վոր ուրիշ կերպարանք ունի:

Յեթե նույնիսկ խուլ տրտունջներ էլ լավել են նոր շինքի ու նրա հիմնողի շուրջը, Ներսես, իբրև քաջ զինանապեա՝ մտքերը հանգստացնելու համար Դվինում ժողովներ և գումարում և մերժողական պատասխաններ գրում Բյուզանդիայի պաշտոնական զինումներին:

Բայց ահա 652-ին Կոստանդ կայսերը գալիս է Հայաստան և 20 հազարանոց բանակով մտնում Դվին: Թեոդորոս Ռշտունին քաշվում է Ախթամար, կայսեր չպատահելու համար: Ներսեսի յերկդիմի կերպարանքն այլևս չի կարող ծածուկ մնալ. կայսեր հրամանով Դվինի մայր յեկեղեցում հոգևոր քա-

* Ճիշտ այդպիսի նկատումով միապետական Ռուսաստանը 1900-ական թվերին ուզում էր Եջմիածնի պարիսպներից վոչ հեռու մի փառավոր պրովոսլավ յեկեղեցի շինել: Խրիմյան կաթողիկոսը Պոբեդանոսցի խնդիր-հրամանը մերժել չկարողանալով, ռուս յեկեղեցու համար տեղ հատկացրեց Մայր տաճարից բավական հեռու, Շողակաթ վանքի մոտերը: Ռուս-ճապոնական պատերազմը վրա հասավ և այդ միտքը մնաց անիրագործելի: Գ. Լ.

հանան հունարէն պատարագ եւ մատուցում, Քաղկեդոնի ժողովը հիշատակվում եւ Սուրբ ժողով-ե կայսրը, Ներսեսը, Մուշեղ սպարապետը «ամեն յեպիսկոպոսունք որ կամայ եւ որ ակամայ» հաղորդվում են ի նշան միութեան*):

Կայսրը, անշուշտ Ներսեսի հետ, գնում եւ Զվարթնոցի շինութիւնը դիտելու, եւ «համերժ հիացեալ ընդ շինուածն», վերադառնում եւ Պոլիս:

Կոստանդի հեռանալուց հետո Ներսեսը սիրտ չի անում մնալու, յերկյուղ կրելով Թեոդորոս Ռշտունուց, իր աթոռն ու շինութեան գործերը հանձնելով իր սենեկապետ Անաստաս յեպիսկոպոսին, ինքը Մավրիանոս զորավարի հետ փախչում եւ Պոլիս:

Վերջան ժամանակ եւ մնում Ներսեսը Պոլսում, հայտնի չեւ. բայց պատմիչի խոսքերից յերևում եւ, վոր յերկար չի մնացել. նրան մայրաքաղաքում լավ ընդունել են, նվերներ տվել եւ պատվով ճանապարհ դրել: Վերադարձին Ներսես մնում եւ յուր ծննդավայր Տայոց յերկրում, 6 տարուց ավելի, մինչև Ռշտունու մահը: (Սեր. 241):

Ներսեսի բացակայութեան տարիներում Զվարթնոցի շինութեան ընթացքին հետևում եր Անաստասը: 659-ին Ներսեսը վերադառնում եւ Դվին, նորից գրավում հայրապետական աթոռը եւ շարունակում իր յեկեղեցու շինութիւնը, ավարտելով 660-ին: Շինութեան ճակատին տեղավորում եւ մի մեծ բարեկեֆ հունական խաչ եւ խոշորագիր հունարեն արձանագրութիւն—

ΝΑΡΧΗΣ ΕΠΟΙΗΣΕ ΜΝΗΜΟΝΕΥΣΑ[ΤΕ]

այսինքն՝ ՆԵՐՍԻՍԻ Է ՇԻՆԵԱԼ, ՅԻՇԵՑԷՔ:

«Հայաստանի սրտում կանգնեցրած յեկեղեցու հունարեն գրութիւնը անձանոթ եւ անհասկանալի եյին հայ ժողովրդին—իրավամբ նկատում եւ Մեսրոպ յեպ.—Հայ կաթողիկոսը անհասկանալի լեզուն գործ եւ ամել միայն յուր ներքին արամադրութեան հետեւելով»:

5 ԶՎԱՐԹՆՈՅԸ—ՄԿՐՏԱՐԱՆ. Հարկ կա՞ արդոք այլ ապացույց եւ վկայութիւններ վորոնելու Զվարթնոցի Մ կ ր տ ա ր տ ն լինելու մասին, քան ինքը՝ յեկեղեցու շէնքը իր ձեով եւ իր գմբեթի տակ, շէնքի մեջտեղում, գոյութիւն ունեցող մեծ ա վ ա գ ա ն ո վ, վոր վեր եւ ամեն ապացույցից: Զվարթնոցը սոսկ յեկեղեցու յե վերածվել հետազայում, գուցե շատ մոտ հետազայում. ծ ա ծ կ ե լ ո վ մ ե ծ ա վ ա գ ա ն ը՝ ս ե դ ա ն շ ի ն ե լ ո վ ե հետեւը, մի անկյունում, ու որ փ ո ք ը ա վ ա գ ա ն դ ն ե լ ո վ:

Առաջին անգամ մամուլի մեջ այդ տարրերնակ յեկեղեցու մասին իր զարմացական կարծիքն հայտնեց ճարտարապետ Թորամանյան:

«(Զվարթնոցն) իր ընդհանուր ձևով մինչև հիմա գոյութիւն ունեցող թե հին եւ թե նոր վ ո չ մ ե կ յ ե կ ե դ ե ց ի ի ն մ ա ն չ ե. գոնե յես առաջին անգամն եւ, վոր կը հանդիպիմ յեկեղեցիի մը, վորի մեջ տեղը դրված ըլլա սեղանը եւ տաճարը եւ անոնց շուրջը, ամբողջ սեղանի յետի մասն ալ միասին առնելով, հատկացված ըլլա աղթող ժողովրդին» (Մուրճ 1905թ. №5)

*) Միայն յեպիսկոպոսներից մեկը մի կերպ փախչում եւ. եւ այդ յեպիսկոպոսը, Ռմանյանի կարծիքով, ինքը մատենագիր Սեբեոսն եւ Գ. Լ.

(Համեմատել Չվարթնոցի հետ Ս. Կոստանաի մկրտարանի (նկ. 3) հատակագիծը և ներքին տեսքը իր գաղերիսյով):

Մեսրոպ յեպ. Տեր-Մովսիսյան Չվարթնոցին նվիրած իր մի ընդարձակ հոդվածի մեջ, ասում է, Վոր «սեղանը ուշ ժամանակում և վերահիշի վերադարձվել և ասում, յենթա-



ԶՎԱՐՔՆՈՑ. վերակազմ. Թ. Թորամանյանի. (մոդելից)
(նկ. 6)


լոր նրանք, վորոնք գրել են Չվարթնոցի մասին, միշտ կանգ են առել շենքի արևելյան կողմում գտնված սենյակի առաջ, թե ի՞նչ բանի յի ծառայել նա: Շատ շատ ասել են, Վոր գուցե այդ սենյակը յեղած լինի յիկեղեցու ավանդատունը. քանի Վոր «խորաններ չկան»: Իսկ մենք կարծում ենք, Վոր այդ սենյակը, Վոր յերկու դուռ ունի դեպի տաճարը՝ յիդել և վոչ այլ ինչ, յեթե միայն հանգիստ ունի. այսինքն մկրտվողները այնտեղ են հանել իրանց հագուստները և յիկել ավազան մտնելու, այլապես բաղմոթյան առաջ չէին հանվիլ և հաղնիլ:

7. ԶՎԱՐՔՆՈՑԻՆ ԱՌԸՆԹԵՐ «ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՐԱՆ» ԿՈԶՎԱԾ ՇԵՆՔԸ. Զը գիտենք ինչու և Վորտեղից վկայություն վերցրած Չվարթնոցի մասին գրող մեր բոլոր բանասերները՝ Թորամանյան, Մեսրոպ յեպիսկոպոս, Արիստակես յեպ. և ուրիշներ նրանից հարավ-արևմուտք ձգվող ընդարձակ շենքի ավերակները համարում են «կաթուղիկոսարան»: Յերե-

վերաշինվել և ասում, յենթադրելով Վոր «յիկեղեցին» առանց սեղան չեր կարող լինել: Գալով ա վ ա դ ա ն ի ն, հարց և տալիս թե «ի՞նչ և յիդել ավազանի նպատակը». քիչ հետո ավելացնում և «ամենաառաջին միտքն է՝ Վոր յիկեղեցու մկրատթյան սկզբնական ավազանը այդ եր, մանավանդ յերբ ի նկատի ունենանք տաճարի կլոր հատակագիծը, Վոր ընդորինակություն և Բյուզանդական (?) մկրտարան կոչված յիկեղեցիների հատակագիծը: Ինչպես տեսնում ենք, հոդվածագիրը մոտենալով հանդերձ իսկությանը, այնուամենայնիվ մարից չի անցկացնում Չվարթնոցի մկրտարան լինելը, հարց տալով թե «ի՞նչ և յիդել ավազանի նպատակը»:

6. ԶՎԱՐՔՆՈՑԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԻ ՍԵՆՅԱԿԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ. Բո-

վի Սերսիսի խոսքերից, վոր այդ շէնքն անվանում է «Բնակություն Ներսիսի»։ Կաթողիկոսարանը, հայրապետական աթոռը չե՞ վոր գտնվում եր Դրվինում և այնտեղ եր Ներսիսի մշտական բնակությունը. կաթողիկոսն, ինչպես տեսանք, այնտեղ ընդունեց Բյուզանդիայի թագավորին. այնտեղ եր լինում յեկեղեցական ժողովներ. և վճռողից և քաղել իր տեղեկությունը Մես. յեպ. և փատհոբեն գրում և թե «նա (Ներսիսը) բարվոք համարեց յուր աթոռը փոխադրել հայերի աչքում ամենամեծ սրբավայր համարված Վաղարշապատ»։ Զվարթնոցում վոչ մի ժամանակ հայրապետական աթոռ չի



ԶՎԱՐԹՆՈՑ. Ներքին տեսքի կտրվածքը. Թորամանյանի. (Նկ. 7)

յեղել և պատմիչներից և վոչ մեկը այդ մասին մի խոսք չի ասում։ Իսկ յեթե Զվարթնոցի գործերով Ներսիս հաճախ գալիս եր այնտեղ, կարող եր ունենալ իր «Բնակությունը», բնակարանը։ Մենք ուրիշ կարծիքի չենք այդ ընդարձակ շէնքի մասին. կաթողիկոսն ինչ պիտի աներ այնտեղ 30-ից ավելի սենյակներ ու դահլիճները։ Տեսնենք այդ շէնքի մասին ինչ և գրում Դրասխանակերտցին.


«Յորինեալ ի նմա (յեկեղեցու) յաւրկս բնակության ինքեան հաստահեղոյս կտիւածոյ քարամբք։ Այլ և կարգեալ կացուցանե ի նմա ամբոխութիւնս երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց» (Յով. կթ. 88)։ Պատմագրի ամբոխությունս և բոլոր ամարդացը Որմանյանը բացատրում և «ուխտավորներու հիւրանոցներ» (Ազգասպաս. 737)։ Իսկ մենք ավելացնում ենք վոր Ներսիսաշէն այդ ընդարձակ տունը յեղել և իջեան ուխտի և մկրտվելու յեկած քաղաքացիների համար, վորոնք մկրտության ծեսը Զվարթնոցում կատարելուց հետո մի քանի օր փնում էյին այդ սենյակներում և աղօթում այդ տան մեջ յեղած փոքր յեկեղեցում։

8. ԶՎԱՐԹՆՈՑԸ ԿՈՐԾԱՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ. Մինչև այժմ հնար չի յեղել պարզելու թե յերբ և ինչ հանգամանքներից և կործանվել Զվարթնոցը։ Ընդունված և ասել, վոր նա կանգուն և յեղել մինչև 9-րդ դարի վերջերը։ Ասողիկի վկայությամբ Գաղիկ Բագրատունի թագավորը 1000 թվականին կառուցում և Անիի Ա. Գրիգորը, ընդորինակելով Զվարթնոցը, բայց նույն պատմագիրն էլ ասում և, վոր այդ ժամանակ Ներսիս Տալեցու շէնքը «փրկալ» և «կործանեալ» եր։ Յեթե փրկալ և կործանեալ եր, ապա ուրեմն շատ դժվար պիտի լիներ նրան ընդորինակելը։

Զվարթնոցի կործանման պատճառ դարձած կարող և լինել, ըստ փմանց, (Ալիշան) 9-րդ դարի վերջերում ասղի ունեցած մեծ յերկրաշարժը, յերբ փրկեց Դվինի մայր յեկեղեցին. պատմիչներն այդ մասին լուռ են։ Միթիթար Այրթախանցին, վորից ասնելով և կիրակոս Գանձակեցին, գրում են, վոր «ա-

ւերեցաւ ի տաճկաց» (այսինքն արարներից), վոր հետու յե հաժանակահոսությունից:

Մեր բանասերներից մեկը այսպիսի կարծիք ե հայտնում. «Արաքացիք իրանց առաջին արշավանքներում ձեռք չեյին տա նրան. և վոչ ել հաստատուն տիրապետության միջոցին, ինչպես առհասարակ ձեռք չեն տվել ուրիշ յեկեղեցիների, և վերջապես յեթե նրանք կրոնական ատելությամբ քանդել, կործանել են այդ յեկեղեցին, ինչո՞ւ չեն ավերել, կործանել Եջմիածնի և մերձակա վանքերի տաճարները: Ամենից հաժանականն այն պետք ե համարել, վոր հետազաներն ըմբռնելով այդ յեկեղեցուն շինության նպատակը՝



(Նկ. 8.) «Քաթուղիկոսական» կոչված շենքի հատակագիծը. (Թ. Թորամանյանի).

տակը՝ լքել, թողել են ուշադրությունից և ինքնիրան, ամայության ու հոսության շնորհիվ, քայքայվել, կործանվել և» (Սեդրակյան, 183):

Կործանվելուց հետո Զվարթնոցի ավերակներն անշուշտ վորոշ պատճառներով ժողովրդի կողմից չեն վայելել այն հարգանքը, ինչ վոր ուրիշ ավերակներ:

«Առհասարակ Հայաստանում, յեթե վորեւ տեղի կամ ավերակի մասին ժողովրդի մեջ պահված են հին ավանդություններ, գրում ե Մեսրոպ յեսպ.— այն ժամանակ այդպիսի տեղեր հանդիսանում են մի տեսակ պաշտամունքի առարկա ժողովրդի համար: Հայեր, մահմեդականներ, նույնիսկ քյուրդեր մեծ յիրկյուղածությամբ են վերաբերվում դեպի այդպիսի տեղերը և ավերակները:

բաղները... այդպիսի լավ վերաբերմունք ժողովրդի կողմից զեպի Զվարթնոց յեկեղեցին չենք նկատում. նա վոչ միայն անտարբեր և գանձել զեպի այդ շինությունները՝ նոցա մասին վոչ մի ավանդություն չըպահպանելով, այլ մինչև անգամ մաքուր սրբել տարել և հողի և շրջակայտի տակից դուրս քնացած բոլոր քարերը»։ («Ազդագր. Հանդես» գ. XV)։

Հուսիկ յեպ. Մովսիսյանը նույն տեսակի կարծիք և կազմել —

«Բուն ժողովուրդը, վոր ընդհանրապես հարգում և յեկեղեցիների ավերակները, վորպես նախնական սրբավայրեր և ուխտատեղի, հակառակ այդ ընդհանրացած սովորության՝ անտարբեր և յեղել միշտ զեպի Խանգարված յեկեղեցին, և վոչ մի բարեպաշտական ձգտում չե տածել զեպի այն։ Այստեղ չեք վառվում մոմ ու ճրագ, չեք ծխվում խուսկ ու կնդրուկ...» («Արարատ», 1903. 874)։

Ահա դարեւոր, սերնդից-սերունդ անցնող անհաշտ վերաբերմունքի նըշաններ են սրանք զեպի ներսես Տայեցու շենքերը։

Բ. Ո՛Վ Ե ՅԵՂԵԼ ԶՎԱՐԹՆՈՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Այս հարցով զբաղվել են շատերը (մենք ել նրանց հետ) ու մի հետեւվանքի չեն հասել։

Հայ և յեղել ճարտարապետը, մեր յերկրացի մեկը, թե ոտար աշխարհից յեկած։

Վոմանք հավանական գտնելով, թե քանի վոր յեկեղեցին շինված և Բյուզանդիայի կայսեր գիտությամբ և ծախսով՝ ընական և կարծել, վոր Պոլսից յեկած լինի մի հույն նշանավոր ճարտարապետ։

Հակառակ կարծիքի յե յեղել Թորամանյան, այսպիսի հիմունքներով. —

«Բյուզանդիայում նման չենք տեսնված չե, մինչդեռ Հայաստանում մի քանիսը կան։ Հայաստանում 7-րդ դարում ճարտարապետական արվեստը շատ զարգացած էր, պետք չեք զգացվի ոտար վարպետներ բերել տալ... Զըվարթնոցի մեջ յեթե մասեր կան, վոր հույն վարպետներու գործ կարելի յե համարել, անոնք ալ գրեթե կապ չունին յեկեղեցու ընդհանուր ճարտարապետության հետ. նկարները և մողախները»։ («Անահիտ» 1911. 9—12)։

Կաղանկատվացին գրում և, վոր իբր Կոստանդ կայսրը Զվարթնոցի բացման հանդեսին ներկա գտնվելով այնքան և հավանել այդ շենքը, վոր իր հետ Պոլիս և տարել ճարտարապետին, վոր նույն ձևի մի յեկեղեցի ել կառուցե իր մայրաքաղաքում. սակայն այդ ճարտարապետը ճանապարհին վախճանել և. — *)

*) Ահա ընադիրը։

«Եւ ի նորին յինն և ի տասն ամին նստի կաթուղիկոս Հայոց ներսես ամս քսան։ Սա եր հայրազիր նորին Կոստանդնի և գանձիւք նորա շինեաց զբաղմալաշմառ վարախն բանաւոր հօտից ի Քաղաքուղաշաի ի սուրբն Գրիգոր և ի նավակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց, վոր յալէժ հիացեալ ընդ շինուածն, ետ հրաման շինողացն զնալ զկնի իւր, զի զնոյնաձեն յարմարեացէ ի սլալատանն։ Եւ ոչ ժամանեալ զնալ ի տուն իւր՝ գաղատոսն ի ճանապարհին վախճանել»։ (Կաղանկ. 563)։

Սա իհարկե առասպել է. Կոստանդի այցելության ժամանակ Զվարթնոցի շինությունը դեռ ավարտած չէր և ուրեմն չէր կարող, նրա բացումը կատարվել, նրա շենքը հիացմունք պատճառել թագավորին, վոչ ել ճարտարապետը կարող եր գործը կիսատ թողած գնալ ուրիշ յերկր:

Սակայն մենք հոգուտ ճարտարապետի տեղացի լինելուն Թորամանյանին կարող ենք ավելացնել հետևյալ նպաստավոր հանգամանքներն ու պատճառաբանությունները. —

ա. Պատմագրության մեջ հիշատակվելով, վոր Կոստանդ կայսրը Ներսեսին Պոլսից ճանապարհ դնելիս մեծագին նվերներ և տվել նրան, ակնարկ չկա վոր նրա հետ ուղարկած լինի նաև ճարտարապետներ:

բ. Պրոֆ. Յ. Որբելին ասում է. Տաշքի Իշխան գյուղում (Ներսեսի ծըննդավայրը) նույն Ներսեսը հիմք է դրել Զվարթնոցի նման մի յեկեղեցու, վոր ասկա 8-րդ, 9 րդ դարերում ավարտել են Գրիգոր Խանձիկի և Սարա Իշխանելին: (Энцикл. Словарь Брокг. III. № 668):

Լինչը նկարագրելով նույն այդ յեկեղեցու ավերակները, կարծիք է հայտնում վոր նրա ճարտարապետը հայ է յեղել: (Линч. Армения, Т. I № 84):

գ. 10-րդ դարում Զվարթնոցի տիպի մի տաճար էլ շինված է Բանայի մեջ: (Ըստ Որբելու քաղկեդոնիկ վրացացած հայերի դավառ):



ԶՎԱՐԹՆՈՅ. Բարյեցեֆ մարդ-բանդակներից (մեթոդ) յերկուսը. (լուսանկարից).
(նկ. 9)

դ. Յեվրոպայից ճարտարապետներ յերբեև Հայաստան դալու մասին վոչ մի տեղ հիշատակություն չենք գտնում, մինչդեռ Հայաստանի ճարտարապետների զանազան հեռավոր յերկրներում կառուցած շենքերի մասին շատ

հիշատակություններ կան, դեռ 19-րդ դարից: Ասողիկը վկայում է, Վոր Վասիլ Բ-ի ժամանակ հայերին Մակեդոնիա գաղթեցրին, Վոր աշտեղ յերկիրը շինեն, հայտնի յե Տրդատ ճարտարապետի Պոլիս կանչվելը և Ս. Սոֆիայի գմբեթի նորոգությունը նրա ձեռքով:

Հայաստանում հայտնի յե մեզ 7-րդ դարում մի այլ նշանավոր ճարտարապետ, Իսրայիլ Գորոխչեցի, Բագրևանդի Ս. Հովհաննես յեկեղեցու կառուցողը: (Христ. Вост. 911 թ. և Վիմական Տարեգիր 1.):

Սակայն մենք ուրիշ տեղեր չը վորոնենք Զվարթնոցի ճարտարապետին. կարծում ենք, Վոր նա իր ամբողջ հասակով կանգնած է յեկեղեցու ճակատից թափված բեկորներից մեկի վրա, բարեկյիֆ, մուրճ և բահը ձեռքին, անունն էլ հայերեն տառերով փորագրված՝ ՅՈՂԱՆ. նրա հետ են ուրիշ, նրման բեկորների վրա իր սգնականները, ճարտարները, 7-րդ դարի հայ կառուցող բանվորներ, նույնպես մուրճ և այլ շինարար գործիքները ձեռքերին բռնած. ուրիշ ռվ կարող էր արժանանալ այդպիսի բարձր պատվի:

Ահա ճարտարապետ Յոհանի և իր աշխատակիցներից մեկի քանդակ պատկերները լուսանկարից. ահա և նույնը յերկու բանվորների հետ միասին սքեմատիք գծագրությամբ (բևտավրացիա). (Նկ. 9 և 10)

Հարց և ծագում թե ինչու և Յոհանը հոգևոր տարագով:

Այդպիսի հարցին կարելի չե տալ հետևյալ պատասխանները:




ԶՎԱՐԹՆՈՅ. Նկ. 9-րդը - գծագիր. 3-րդ բան-
դակի հետ, (բևտավրացիա). (Նկ. 10)

Վորներ, իշխանն էր մանրանկարչության մեջ ներկայացված են հոգևոր սքեմով:
Գ. ճարտարապետ Յոհանը հոգևորական է, թերևս ներսեսից Հեռնադրը-
ված իր հանձարին ի պատիվ և ի վարձատրություն: Գուցե կարելի չե
նույն իսկ այդ մարդուն նույնացնել ներսեսի նախադասությամբ Գվինում
կայացած ժողովին մասնակցող Յոհան վարդապետի հետ:

Համենայն դեպս մեր կարծիքով Յոհանը վոչ այլ վոք է, յեթե վոչ Զվարթնոցի գլխավոր ճարտարապետը:

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0387126

